ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 152
*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքը (Եղիպատրուշ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ*
*(Ապարան համայնքի (Եղիպատրուշ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքը (Եղիպատրուշ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-1 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը*՝

| ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի (Եղիպատրուշ բնակավայրը) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 02-040-0392-0001 կադաստրային ծածկագրով 0.03272 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք | 02-040-0392-0001 կադաստրային ծածկագրով 0.03272 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Եղիպատրուշ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ե. Վարդանյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | Հ. Դավթյան |

Երևան, «30» «ապրիլի» 2024թ.